Նախագիծ

Երկրորդ ընթերցում

Կ-536[2]-29.03.2020-ՏՀ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Ապահովագրության եւ ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության 2007 թվականի ապրիլի 9-ի ՀՕ-177-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 25-րդ հոդվածում՝

1) 1-ին մասում «կամ այլ կապի» բառերից հետո լրացնել «, ներառյալ՝ էլեկտրոնային փոստի, ծրագրային եւ հավելվածային հարթակների (այդ թվում՝ բջջային հավելվածների)» բառերը.
2) 1-ին մասի 2-րդ պարբերության վերջին նախադասությունը շարադրել նոր խմբագրությամբ՝
   < Նման նիստը հեռակա (հարցման) կարգով անցկացված նիստ չի համարվում, իսկ այդպիսի նիստում ընդունված որոշումները չեն համարվում հեռակա քվեարկության (հարցման) միջոցով ընդունված>>

Հոդված 2. Օրենքի 30-րդ հոդվածի 4-րդ մասում «կամ կապի այլ» բառերից հետո լրացնել «, ներառյալ՝ էլեկտրոնային փոստի, ծրագրային եւ հավելվածային հարթակների (այդ թվում՝ բջջային հավելվածների)» բառերը:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Երկրորդ ընթերցում

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Ապահովագրության եւ ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության 2007 թվականի ապրիլի 9-ի ՀՕ-177-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 25-րդ հոդվածում՝

3) ~~ի 1-ին մասից հանել «, բացառությամբ սույն օրենքի 24-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ, 3-րդ եւ 7-րդ կետերում նշված հարցերի: Տարեկան ընդհանուր ժողովը չի կարող անցկացվել հեռակա կարգով քվեարկության (հարցման) միջոցով» բառերը, եւ~~ 1-ին մասում «կամ այլ կապի» բառերից հետո լրացնել «, ներառյալ՝ էլեկտրոնային փոստի, ծրագրային եւ հավելվածային հարթակների (այդ թվում՝ բջջային հավելվածների)» բառերը.
4) 1-ին մասի 2-րդ պարբերության վերջին նախադասությունը շարադրել նոր խմբագրությամբ՝

< Նման նիստը հեռակա (հարցման) կարգով անցկացված նիստ չի համարվում, իսկ այդպիսի նիստում ընդունված որոշումները չեն համարվում հեռակա քվեարկության (հարցման) միջոցով ընդունված>>

÷

Հոդված 2. Օրենքի 30-րդ հոդվածի 4-րդ մասում «կամ կապի այլ» բառերից հետո լրացնել «, ներառյալ՝ էլեկտրոնային փոստի, ծրագրային եւ հավելվածային հարթակների (այդ թվում՝ բջջային հավելվածների)» բառերը~~, եւ 4-րդ մասի վերջին նախադասությունը հանել~~:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Փաստաթղթային կոդ՝ Կ-536[2]-29.03.2020-ՏՀ-011/1) ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ ՎԵՐԲԵՐՅԱԼ

	Առաջարկության, (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկությունը (փոփոխությունը, լրացումը)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկությունն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ Հանձնաժողովի որոշումը
1	2	3	4	5	6
1.	ՀՀ կառավարություն	«Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին> ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին> ՀՀ օրենքի 1-ին հոդվածով փոփոխվող 25-րդ հոդվածի առաջին մաս	Օրենքի 25-րդ հոդվածի փոփոխության բովանդակությունը առաջարկվում է հետևյալ կերպ 1) 1-ին մասում «կամ այլ կապի» բառերից հետո լրացնել «, ներառյալ՝ էլեկտրոնային փոստի, ծրագրային եւ հավելվածային հարթակների (այդ թվում՝ բջջային հավելվածների)» բառերը. 2) 1-ին մասի վերջին նախադասությունը շարադրել նոր խմբագրությամբ՝ «Նման նիստը հեռակա (հարցման) կարգով անցկացված նիստ չի համարվում, իսկ այդպիսի նիստում ընդունված	Ընդունվել է	Ընդունվել է

			որոշումները չեն համարվում հեռակա քվեարկության (հարցման) միջոցով ընդունված»: Խնդիրը կայանում է նրանում, որ այդ նույն հոդվածով թույլատրվում է իրական ժամանակի ռեժիմով տեխնիկական միջոցների օգտագործմամբ ժողով իրականացնել և դա չի համարվում հեռակա: Օրենքն ունի միայն որոշ սահմանափակումներ, որոնցով արգելվում է որոշումների քվեարկություն հեռակա ձևով, ինչն էլ առաջարկվում է հանել: Ստացվում է, որ ապահովագրության ոլորտում իրական ռեժիմով ցանկացած հարցի վերաբերյալ կարելի է ժողով իրականացնել և որոշում ընդունել և դա չի հանդիսանում հեռակա նիստ և դրանում ընդունված որոշումը հեռակա կարգով ընդունված որոշում:		
2.	ՀՀ կառավարություն	«Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին> ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին> ՀՀ օրենքի 1-ին հոդվածով	Նախագծի 2-րդ հոդվածից հանել «և 4-րդ մասի վերջին նախադասությունը հանել» բառերը վերը նշված հիմնավորմամբ:	Ընդունվել է	Ընդունվել է

		փոփոխվող 30 հոդվածի 4-րդ մաս			